ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

3 փետրվարի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

12
(2862)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԻԼԻՈՆԱՎՈՐ ԴՐԱՄՆԵՐԻ ՇԵՂՈՒՄ

Մինչ պատգամավոր դառնալը ակտիվիստ Լենա Նազարյանը օրուգիշեր խոսում էր պաշտոնյաների գործունեության թափանցիկության, հաշվետվողականության մասին, սակայն ԱԺ փոխխոսնակի, ապա պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելով՝ ամենափակ եւ ծպտյալ հարստացած կերպարներից դարձավ՝ ըստ պաշտոնական հայտարարագրի: «Ժողովուրդ» օրաթերթը, ուսումնասիրելով ՔՊ-ական պատգամավորներ Լենա Նազարյանի եւ նրա ամուսնու՝ Նարեկ Բաբայանի հայտարարագրերը, պարզեց, որ ամուսինները միեւնույն գույքի գնի վերաբերյալ խիստ տարբեր թվեր են ներկայացրել պաշտոնական փաստաթղթերում: Եվ այսպես, պատգամավոր Նարեկ Բաբայանը 2022թ. հայտարարագրով լիազոր մարմնին հայտնել է, որ Ծաղկաձորում գնված անշարժ գույքը ձեռք է բերվել 27.041 միլիոն դրամով, իսկ կինը՝ Լենա Նազարյանը, ավելի մատչելի գին է ներկայացրել՝ 24.336 միլիոն դրամով: Ու այդպես էլ անհասկանալի է՝ ի վերջո, Ծաղկաձորի ամառանոց-բնակարանը ինչ իրական արժեքով են իշխանական պատգամավորները ձեռք բերել: Իհարկե, այս բացահայտումը պետք է աներ ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, որը ընդդիմադիր պատգամավորների ամեն լուման խոշորացույցով ստուգում է, սակայն, հետաքրքիր զուգադիպությամբ, իշխանական կարկառուն ներկայացուցիչների թույլ տված սխալները վրիպել են կարեւորագույն այդ կառույցի աչքից: Հիշեցնենք, որ եւ Լենա Նազարյանը, եւ նրա ամուսինը մինչ հեղափոխությունը երթեւեկում էին 100-դրամանոց «գազել»-ներով, իսկ հիմա փափուկ կյանքով են ապրում. ճամփորդում են, տուն ու ամառանոցային հանգստի գոտի Ծաղկաձորում անշարժ գույք են գնում՝ մոռանալով Ամուլսարի մասին, բնապահպանական եւ քաղաքական ու ընտրական անարդարությունների մասին, որոնց թեմաներով ակտիվիստներ էին:

ՔՊ-ականները հաջորդ շաբաթ կրկին կհավաքվեն. երկուշաբթի երեկոյան խմբակցության նիստ տեղի կունենա: ArmLur.am-ը հայտնել էր, որ փետրվարի 6-ից մեկնարկում է ԱԺ հերթական նստաշրջանը: ՔՊ-ականները մտադիր են լուրջ պատրաստվել նստաշրջանին, քանի որ օրակարգում կարեւոր հարցեր են ընդգրկված, այդ թվում՝ ՔՊ-ական տիկնանց հեղինակած «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության եւ ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» աղմկահարույց խայտառակ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին նախագիծը, որով, ըստ էության, ՔՊ-ականները օրենքով պաշտպանության տակ են առնում նույնասեռականներին եւ արգելում կուսության ստուգումը: ԱԺ մեկնարկելիք նիստից առաջ ՔՊ-ականները կքննարկեն օրակարգի հետ կապված հարցեր: Ինչպես իշխանական մեր աղբյուրներն են փոխանցում, պատգամավորներին ասվել է, որ չբացակայեն նիստից, քանի որ կարեւոր հարցեր են քննարկվելու:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Երեւանի ագրարային համալսարանի ռեկտոր Վարդան Ուռուտյանը 2023 դեկտեմբերի 25-ից դադարել է զբաղեցնել համալսարանի ռեկտորի պաշտոնը: Մեր տեղեկությունների համաձայն՝ հայրենի իշխանությունները նպատակ ունեն համալսարաններում «հեղափոխություն» իրականացնել՝ հերթով ազատվելով ռեկտորներից՝ իրենց «սրտի անձանց» այդ պաշտոններում նշանակելու համար: Տեղեկացանք, որ այս անգամ պաշտոնից «հեռացումն» իրականացվել է Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ Գեղամ Գեւորգյանի միջոցով, որը համալսարանի հոգաբարձուների խորհրդի նախագահն է: Պարզվում է՝ Գեւորգյանը նրա հետ մասնավոր զրույցներ է ունեցել, ակնարկել, որ պետք է հեռանա, թե չէ հնարավոր է ստուգումներ անցկացնեն ու ինչ-որ կոռուպցիոն բացահայտումներ անեն. ճիշտ կլինի առանց սենսացիաների հեռանա: ArmLur.am-ը կապ է հաստատել Ագրարային համալսարանի նախկին ռեկտոր Վարդան Ուռուտյանի հետ՝ պարզելու համար, թե ինչու կրկին չի առաջադրվել ռեկտորի պաշտոնում. «Պաշտոնավարումս ավարտվել է, եւ ես չեմ դիմել 2-րդ փուլի համար»: Վերջինս հրաժարվեց այլ հարցերի պատասխանել:



«Ժողովուրդ» օրաթերթին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից պաշտոնապես հայտնել են, որ ուսումնասիրության առարկա էին դարձել Կ. Թումանյանի բարեվարքության ուսումնասիրության գործընթացի շրջանակներում՝ զանգվածային լրատվական միջոցներում հրապարակված տեղեկությունների համատեքստում: Ստացվում է, որ հանձնաժողովը բարեվարքության շրջանակներում գնահատման առարկա է դարձրել ԲԴԽ գիտնական անդամի թեկնածու Կարեն Թումանյանի բանակից ազատվելու հարցը, որի մասին հրապարակում էր ունեցել «Ժողովուրդ» օրաթերթը: Այսպիսով. եզրակացությունը պետք է Ազգային ժողովին եւ թեկնածուին ուղղված հարցերի բարձրացման հիմք հանդիսանա, եւ դեռ ավելին՝ նաեւ բարձրացվի հանձնաժողովի հաշվետվողականության հարցը, թե արդյոք զինծառայության հետ կապված փաստը պատշաճ է գնահատվել: Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթի ձեռքի տակ է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տրված փաստաթուղթն այն մասին, թե ինչ հիմքով է ազատվել բանակից Կարեն Թումանյանը: Ըստ այդմ՝ նա հասցրել է մինչեւ զորակոչը ունենալ 2 երեխա: Թումանյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասել է, որ իր կյանքում 1 անգամ է ամուսնացել՝ 2012 թվականին, այսինքն՝ 36 տարեկանում, եւ հարց է առաջանում, թե այդ դեպքում ինչպես է 1994թ.-ին 18-ը բոլորած Թումանյանը ազատվել պարտադիր զինծառայությունից, եթե 36 տարեկանում է ամուսնացել եւ ակնհայտորեն ունի փոքր կին եւ երեխաներ: Լուրեր կան, որ նա արդեն 2 երեխա ունեցող մի կնոջ հետ է ամուսնացել, որից հետո բաժանվել է, ապա այդ կնոջ հետ է ամուսնացել նրա հայրը: Թումանյանը հերքեց այդ տեղեկությունը՝ ասելով, որ մեկ անգամ է ամուսնացել:

ՄԱՆԴԱՏԻՑ ԶՐԿՈՒՄ ԵՆ

«ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ԾԻԾԱՂ Է ԱՌԱՋԱՑՆՈՒՄ»

Երեկ հայտնի դարձավ, որ քաղաքային իշխանությունները մտադիր են մանդատից զրկել ավագանու ընդդիմադիր հինգ անդամների: Խոսքը Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանի եւ ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամներ Սոնա Աղեկյանի, Զարուհի Փոստանջյանի, Գեւորգ Ստեփանյանի եւ Նարինե Հայրապետյանի մասին է: Հարցը կքննարկվի Երեւանի ավագանու փետրվարի 5-ի արտահերթ նիստում:

ArmLur.am-ը զրուցել է «Ազգային առաջընթաց» խմբակցության քարտուղար Իզաբելլա Աբգարյանի հետ:

-Տիկին Աբգարյան, ինչու՞ է քաղաքային իշխանությունը որոշել մանդատից զրկել ավագանու մի քանի անդամների, այդ թվում՝ Հայկ Մարությանին: Հիմնավորումն այն է, որ նա անհարգելի պատճառներով բացակայել է ավագանու նիստերից: Ի՞նչ կասեք, ի՞նչ գնահատական կտաք իշխանությունների այս որոշմանը:

-Կասկած չկա, որ հիմնական դրդապատճառը պայմանավորված է ոչ թե քաղաքի հետ կապված մտահոգություններով, այլ հենց քաղաքական դիրքորոշմամբ, քանի որ թե՛ Հայկ Մարությանի ֆիգուրը, թե՛ նրա՝ քաղաքապետարանում ունեցած վերջին երկու ելույթներն անհանգստություն են պատճառել գործող իշխանություններին: Մենք նաեւ տեսնում ենք, որ «Մայր Հայաստան» խմբակցությունից էլ հենց այն ավագանու անդամներն են մանդատից զրկվելու, որոնք առանձնացել են իրենց ըմբոստությամբ եւ քննադատող ելույթներով: Եթե ցանկություն ունենային բոլորի ներկա-բացականերն ուսումնասիրել, ավագանիում կան անդամներ, որոնք ընդհանրապես նիստերին չեն մասնակցել:

-Խոսքը «Հանրային ձայն» խմբակցության անդամների մասի՞ն է:

-Այո՛, նաեւ «Հանրային ձայն»-ի երկու անդամների մանդատի հարցը պետք է նույնպես բարձրացվեր: Անշուշտ, սա քաղաքական որոշում էր, եւ այն հիմնավորումը, որը մենք տեսնում ենք, ինձ մոտ ծիծաղ է առաջացնում՝ թե Մարությանը չի ցանկացել զբաղվել Երեւանի խնդիրներով: Այն աշխատանքը, որը մեր խմբակցությունն արել է Երեւանում՝ Հայկ Մարությանի գլխավորությամբ, շատ ավելի օգտակար է եղել Երեւանի համար, քան այն խայտառակ որոշումները, որոնք բնավ երեւանցու համար չէին, այլ, ընդհակառակը, թալանում են նրանց գրպանները ու շատ ծանր իրավիճակում են դրել նրանց:

-Տիկին Աբգարյան, այստեղ նաեւ հարցի հակառակ կողմը կա: Հայկ Մարությանը, լինելով ձեր թիմի առանցքային դեմքը, ավագանու նիստի հենց սկզբից չի մասնակցել նիստերին ու սրանով հիմք է տվել իշխանություններին, որ նման գործընթաց ձեռնարկեն:

-Եթե խոսքը գնում է կեսից ավելի բացակաների մասին, ապա իրենք չէին կարող հաշվել դա: Խմբակցությունն ամբողջ կազմով բոյկոտել է նիստը. դա քաղաքական որոշում է եղել, ինչի իրավունքը մենք ունենք: Սա չի կարող համարվել անհարգելի բացակա, քանի որ անհամաձայություն հայտնելը, հավաքներ, բոյկոտներ կազմակերպելը, քաղաքական դիրքորոշում է եւ դա սահմանադրորեն ամրագրված իրավունք է:

-Ի՞նչ եք պատրաստվում անել, ի՞նչ քայլեր եք ձեռնարկելու:

-Մենք առաջիկայում կհայտարարենք մեր գործողությունների մասին:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՆՈՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ԳՆՈՒՄ Է ԴԵՊԻ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԲԱՆԱԿ

Հայաստանի կառավարությունը, նախատեսվում է, որ այս տարվա ընթացքում կավարտի Զինված ուժերի բարեփոխումների հայեցակարգը: Այս մասին ասել է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը Հայաստանի հանրային ռադիոյի «Անվտանգային միջավայր» հաղորդմանը տված հարցազրույցում:

Անդրադառնալով հարցին, թե ինչով է պայմանավորված Հայաստանի զինված ուժերի ռեֆորմների հայեցակարգի բացակայությունը՝ հաշվի առնելով, որ դեռ 2022թ. հունվարին պետք է պատրաստ լիներ «Պաշտպանության մասին օրենք»-ի նոր նախագիծը՝ վարչապետն ասել է. «2022 թ.-ի հունվարին այդ հայեցակարգը պատրաստ էր, բայց 2022 թ.-ի ձմռանը տեղի ունեցան իրադարձություններ, որոնք ակնհայտ դարձրին, որ այդ հայեցակարգով չենք կարող առաջ գնալ: Եվ մենք հիմա պետք է ոչ միայն ունենանք հայեցակարգ, այլ պետք է հասկանալ նաեւ, թե այդ հայեցակարգի իրագործումը որքանով է իրատեսական, այդ թվում՝ ռազմատեխնիկական ոլորտում համագործակցության վերաբերյալ: Մենք պետք է հասկանանք, թե ում հետ իրատեսորեն կարող ենք ունենալ ռազմատեխնիկական եւ պաշտպանական բնույթի հարաբերություններ»:

Նա հավելել է՝ այդ խնդիրը նախկինում հեշտ է եղել, որովհետ– այդ հարցը չի եղել, եւ հայեցակարգ ստեղծելու մեջ էլ բարդություն չի եղել:

«Նախկինում մեր պաշտպանական ոլորտի հարաբերությունների 95-97 տոկոսը Ռուսաստանի Դաշնության հետ էր, հիմա այդպես չի կարող լինել եւ օբյեկտիվ, եւ սուբյեկտիվ պատճառներով: Հիմա պետք է հասկանանք՝ այս հայեցակարգի մեջ ի՞նչ հարաբերություններ ենք ունենում, օրինակ, Հնդկաստանի հետ»,-նշել է նա: Վարչապետը կարեւորել է նաեւ պատասխանելը հարցերին, թե Հայաստանը Իրանի Իսլամական Հանրապետության, Վրաստանի, ԱՄՆ-ի հետ ինչ անվտանգային հարաբերություններ է ունենալու, ունենալու է, թե չի ունենալու, կամ Ռուսաստանի հետ անվտանգային հարաբերությունները փոխվելու են, թե չեն փոխվելու, ինչպես են փոխվելու, Հայաստանը մնում է ՀԱՊԿ-ի անդամ, թե չի մնում, Ֆրանսիայի հետ ինչ հարաբերություններ է կառուցում:

«Այստեղ խնդիրը հետեւյալն է, որ այդ հայեցակարգը որպես դեկլարացիա արդեն հռչակված է: Եվ մենք պետք է ձեւակերպենք այնպիսի հայեցակարգ, որի իրագործման շուրջ առնվազն ունենք պայմանավորվածություններ: Եվ ես կարծում եմ, որ մենք այս տարվա ընթացքում պետք է այդ հայեցակարգն ավարտենք: Այստեղ կոնցեպտուալ մոտեցում կա. ինքը տեսակա՞ն փաստաթուղթ է, որը պետք է ընդունենք եւ դրա իրագործման ձեւերը հասկանանք, թե՞ ինքն, այնուամենայնիվ, 50-50՝ եւ տեսական, եւ գործնական է, որի տեսությունը կա, եւ որի պրակտիկայի պայմանավորվածությունները որոշակի փաստաթղթերով, պայմանագրերով արդեն ամրացված են»,-ասել է վարչապետը:

Փաշինյանն ընդգծել է՝ կառավարությունն ասել է եւ գնում է դեպի պրոֆեսիոնալ բանակ: Փաշինյանը «Պաշտպան հայրենյաց» ծրագիրը համարեց հոյակապ բարեփոխում՝ բայց նաեւ կարեւորելով, որ այդ հայեցակարգն ունենա քաղաքական կոնտեքստ:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԸ ԲՈՐԲՈՔՎԵԼ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ դատավորները ժողովին բարձրացրել են իրենց նկատմամբ անհարգալից վերաբերմունքի հարցը, որ ժողովը կայացել է կառավարության շենքում, ու իրենք ստիպված են եղել երկար կանգնել, որ կառավարության շենքի ռենտգեն սարքերի միջով անցնեն, ինչը վիրավորական է եղել ու կազմակերպման տեսանկյունից ոչ ճիշտ: Ի դեպ, մեզ հասած լուրերի համաձայն՝ հիմնական ակտիվ հարցը բարձրացնողներից մեկը Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի դատավոր Գեւորգ Գյոզալյանն է եղել, որը եղել է վարչապետ Փաշինյանի դստեր շահերի պաշտպանը:

Նշենք, որ Սահմանադրական դատարանի դատավոր դառնալու համար դիմել էին 3 դատավոր, որոնցից երկու թեկնածուների մեջ էր գնում «կռիվը»: ՍԴ դատավոր դառնալու համար դիմել էին Երեւան քաղաքի դատավոր Դավիթ Բալայանը եւ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի եղբայրը՝ Դավիթ Խաչատուրյանը, որը մի քանի ամիս առաջ էր ԲԴԽ-ից գնացել ու ԱԺ-ում ընտրվել էր Վճռաբեկ դատարանի դատավոր: Արդյունքում 158 դատավոր ՍԴ դատավոր է տեսնում Դավիթ Բալայանին, իսկ 100 դատավոր՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի եղբորը՝ Դավիթ Խաչատուրյանին: Արդյունքում հաղթեց Դավիթ Բալայանը, եւ գնդակը հիմա ԱԺ-ի ձեռքում է, Ազգային ժողովը պետք է վերջնական որոշում կայացնի:

Ինչպես հայտնի է, Սահմանադրական դատարանի դատավոր Արայիկ Թունյանը հրաժարական տվեց, եւ ԱԺ-ն, հիմք ընդունելով հրաժարականի մասին դիմումը եւ առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 147-րդ հոդվածի 2-րդ մասով, 2024 թվականի հունվարի 4-ից դադարած համարեց Սահմանադրական դատարանի դատավոր Արայիկ Թունյանի լիազորությունները:

Նշենք, որ Թունյանն ընտրվել է Եվրասիական տնտեսական միության դատարանի դատավոր եւ այդ պատճառով հրաժարական տվեց ՍԴ դատավորի պաշտոնից:

ՆՈՐ ՇԱՐԺՈՒՄ՝ ԸՆԴԴԵՄ «ԷՎՈԿԱԲԱՆԿ»-Ի

Երեւանում մի նոր շարժում է սկսվել՝ փրկենք թենիսի կորտերը: Նախաձեռնողները հեշթեգներ են ընտրել՝ #ԷվոկաբանկԲոյկոտ, #BoycottEvocaBank, #ՓրկենքԹենիսիԿորտերը: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում քաղաքային պլանավորման մասնագետ Վիկտոր Մնացականյանն ասաց, որ չեն նահանջելու: «Թենիսի կորտերն ավելի հին են, քան Օղակաձեւ այգին. թենիսը մարզական է եւ պետք է կցվի, օրինակ, համալսարանին: Պետք է նախագիծ լինի, պետք չէ հատվածային, ինչ-որ անգրագետ լուծումներ տալ: Օղակաձեւ այգու վերաիմաստավորումն անիմաստ է, չի կարելի թույլ տալ թենիսի կորտերը..Այն մեր քաղաքային ինքնության մաս է»,- ասաց Վիկտոր Մնացականյանը:

ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻԶԱԿԵՏՈՒՄ

Օրերս մամուլում գլխապտույտ առաջացրած ձերբակալությունների լուրերի կիզակետում էկոնոմիկայի նախարարությունն է եւ «Սիներջի ինթրնեշնըլ սիսթըմզ» ՍՊԸ-ն:

«Սիներջի ինթրնեշնըլ սիսթըմզ» ՍՊԸ-ն, բացի էկոնոմիկայի նախարարությունից գնումներից, պայմանագրեր է կնքել Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության հետ:

2023 թվականին ընկերությունը դրամաշնորհային մրցույթի գնման ընթացակարգով 185 մլն 930 հազար դրամ արժողության պայմանագիր է կնքել, որը տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող առեւտրային կազմակերպություններին եւ անհատ ձեռնարկատերերին պետական աջակցություն է համարվում:

«Պայմանագրով նախարարությունը պարտավոր է որոշման դրույթներով հաստատված կարգով ծրագրի եւ միջոցառման իրականացման շրջանակներում կազմակերպությանը հատկացնել միանվագ պետական աջակցություն»:

Պայմանագիրը ստորագրվել է ՀՀ ԲՏԱ գլխավոր քարտուղար Նարեկ Մելքումյանի եւ «Սիներջի ինթրնեշնըլ սիսթըմզ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Աննա Ստեփանյանի միջեւ:

ԲՏԱ եւ «Սիներջի ինթրնեշնըլ սիսթըմզ» ՍՊԸ կապը կապված է ընկերության՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ներկայացուցիչ լինելու հետ: Նաեւ հիշեցնենք, որ ՏՏ ոլորտի կազմակերպություններին վերջին տարիներին հարկային արտոնություններ շնորհվեցին:

Հավելենք նաեւ, որ Հայաստանում Ամերիկյան առեւտրի պալատի տնօրենների խորհրդի անդամ, «Սիներջի Ինթրնեշնըլ Սիսթըմզ» ընկերության հիմնադիր-գործադիր տնօրեն Աշոտ Հովհաննիսյանը Հայաստանի գիտության եւ տեխնոլոգիաների զարգացման խորհրդի անդամ է, որը ձերբակալվել է էկոնոմիկայի նախարարությունում քննչական գործողություններից հետո: Սակայն, շատ կողմերից համարվում են անարդար այդ կալանքները:

ԷԱԿԱՆՈՐԵՆ ՇԵՂՎԵԼ Է ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾԻՑ

2023թ. պետական բյուջեի ծախսերը թերակատարվել են, սակայն միայն կապիտալ ծախսերի մասով: Ընթացիկ ծախսերը իրականացվել են բյուջեով նախատեսվածից ավելի մեծ ծավալներով (կատարողականի վերջնական տվյալները հասանելի կլինեն 2023թ. պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունում): Կապիտալ ծախսերը, թերակատարվելով հանդերձ, նախորդ տարվա համեմատ, աճել են, ինչը կարող է նպաստել տնտեսական աճի արագացմանը, սակայն անհրաժեշտ է իրականացնել դրանց առավել մանրամասն ուսումնասիրություն՝ տնտեսությանն ուղղվող եւ պաշտպանության ոլորտին ուղղվող ծախսերը տարանջատելու համար, որպեսզի հնարավոր լինի գնահատել դրանց աճի տնտեսական ազդեցությունները:

ՀԱՂԹԵԼ ԵՆ

«ՆՄԵՄԱՑՆՈՒՄ ԵՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԴԵՐԸ», Թ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր Թագուհի Թովմասյանը երեկ հրավիրված ասուլիսում անդրադարձավ ՔՊ խմբակցության պատգամավոր Լենա Նազարյանի դեմ իր ներկայացրած հայցով կայացված վճռին:

«Այս ասուլիսը երեւի վերնագրենք «Կարեն Անդրեասյանի համար մի լավ լուր եւ մի վատ լուր», որովհետեւ արդարությունը հաղթել է դատարանում: Եվ ես ուրախությամբ եմ արձանագրում, որ մենք հաղթել ենք դատարանում: Իհարկե, մի քիչ վախվորած վճիռ է, բայց, այնուամենայնիվ, վճիռը կայացվել է: Եթե մենք լինեինք նորմալ իրավական պետություն, դատական համակարգի ցանկացած ներկայացուցիչ, առավել եւս՝ բարձրագույն դատական համակարգի ներկայացուցիչ, բավարարված կզգար, եթե տեղի է ունեցել վիրավորանք, եւ այդ վիրավորանքն արձանագրվել է նաեւ դատական ակտերով, եւ պահանջվում է պատիժ: Բայց քանի որ Կարեն Անդրեասյանը ոգեշնչվում է Նիկոլ Փաշինյանի հայտնի լուսանկարով եւ կախում է իր աշխատասենյակում, ես վստահ եմ, որ իր համար իմ լավ լուրը վատ լուր էր»,- ասաց Թագուհի Թովմասյանը:

Հիշեցնենք, որ դեռեւս 2021 թվականին Թագուհի Թովմասյանը դատական հայց էր ներկայացրել ԱԺ այն ժամանակվա փոխնախագահ Լենա Նազարյանի դեմ: Հայցի ներկայացման հիմք էր եղել Լենա Նազարյանի «իդիոտկա» արտահայտությունը Թագուհի Թովմասյանի հասցեին: ԱԺ նիստերից մեկում, երբ Թագուհի Թովմասյանն ամբիոնից խոսում էր Աբովյանի դիահերձարանում զինծառայողների աճյունների նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունքի մասին, ԱԺ փոխնախագահ Լենա Նազարյանը ցածրաձայն ասել էր՝ «իդիոտկա», սակայն բարձրախոսը միացված էր եղել, եւ հանրության համար նրա արտահայտությունը լսելի էր դարձել:

«Երբ ես ԱԺ ամբիոնից խոսում էի Աբովյանի դիահերձարանում գետնին շպրտված, պարկերի մեջ լցված դիակների մասին, ի պատասխան՝ ՔՊ խմբակցության ներկայացուցիչ, ԱԺ փոխնախագահ Լենա Նազարյանը դիտավորյալ ինձ վիրավորեց: Ես հենց ամբիոնից առաջարկեցի ներողություն խնդրել, բայց նա հրաժարվեց, ինչի արդյունքում ես գնացի դատական ճանապարհով, որովհետեւ կարծում եմ, որ ցանկացած վիրավորանք պետք է ունենա իր պատասխանը: Եվ հիմա դատարանում եռաստիճան համակարգով անցել ենք, բոլոր ատյաններում մենք հաղթել ենք:

Բայց այսօրվա դրությամբ պատգամավոր Լենա Նազարյանը չի կատարում վճիռը: Այսինքն՝ մենք գործ ունենք «բեզպրեդելի» հետ, երբ խորհրդարանի իշխանական պատգամավորը Հայաստանի դատական համակարգի կայացրած, օրինական ուժի մեջ մտած վճիռը չի կատարում: Մեկ տարի է՝ դատարանը կայացրել է վճիռը, եւ մեկ տարի է՝ Լենա Նազարյանը չի կատարում վճիռը: Մենք դիմել ենք ԴԱՀԿ, սպասում ենք արձագանքներին: Եթե չկատարի, ես հետեւողականորեն գնալու եմ դատախազություն եւ պահանջելու եմ, որ արդեն քրեական հետապնդում հարուցվի Լենա Նազարյանի նկատմամբ՝ դիտավորյալ քրեական հանցագործություն իրականացնելու համար»,- ասաց Թագուհի Թովմասյանը:

Նա նշեց, որ ուզում է որպես քաղաքական գնահատական ասել, որ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության համար սա նորություն չէ. էլի կան պատգամավորներ, որոնք տարբեր գործերով դատարանների վճիռները չեն կատարել:

«Արսեն Թորոսյանը կիսակատարեց եւ խեղկատակություն արեց, եւ Արթուր Հովհաննիսյանը, որը «Թի Վի 5»-ին պարտվել է դատարանում, ԴԱՀԿ-ն ստիպողաբար նրանցից վերցրել է սահմանված տուգանքի չափը, բայց Արթուր Հովհաննիսյանը ներողություն չի խնդրում: Այսինքն՝ այս մարդիկ ընդհանրապես դատարանի որոշումները չեն կատարում ու հաշվի չեն առնում ՀՀ երրորդ իշխանության կատարած որոշումները, որը ոչ այլ ինչ է, քան անպատժելիություն: Եվ Նիկոլ Փաշինյանը, երբ խոսում էր դատական անկախության մասին, դատարանների դերի բարձրացման մասին, հենց իրենք իրենց գործողություններով Հայաստանում նսեմացնում են դատարանների դերը: Դատական իշխանության նկատմամբ ամենամեծ անարգանքը ցուցաբերում է իշխանության ներկայացուցիչը, տվյալ դեպքում՝ Լենա Նազարյանը»,- ասաց նա:

Ըստ Թագուհի Թովմասյանի՝ հայցով երկու պահանջ էին ներկայացրել՝ եւ ներողություն խնդրելու, եւ դրամական փոխհատուցման պահանջ: «Բայց Լենա Նազարյանի փաստաբանը ներկայացրել էր մի շարք փաստաթղթեր, որ իրենք վարկով են ապրում, ֆինանսապես ոչ այնքան լավ վիճակում են, եւ դատարանը, Լենա Նազարյանի սոցիալական վիճակը հաշվի առնելով, բավարարել է ընդամենը 300 հազար դրամի փոխհատուցում: Մենք ներկայացրել էինք 1 մլն դրամ բռնագանձելու պահանջ»,- ասաց Թովմասյանը:

Փաստաբան Սերգեյ Ոսկանյանն էլ նշեց. «Քանի որ վիրավորական արտահայտությունը հնչեցվել է հենց ԱԺ ամբիոնից, պահանջել էի, որպեսզի դատարանը սահմանի պատասխանատվության հետեւյալ ձեւը, որ պատասխանող Լենա Նազարյանը հենց նույն ամբիոնից, որտեղից վիրավորական արտահայտություն է հնչեցրել, հնչեցնի նաեւ ներողության տեքստը: Սակայն առաջին ատյանի դատարանն իր վճռում ձեւակերպել է հետեւյալ միտքը, որ «ԱԺ կանոնակարգ» օրենքի համաձայն՝ այդ ամբիոնը նախատեսված չէ վիրավորելու եւ հետո էլ վիրավորանքի համար ներողություն խնդրելու համար: Եթե նույնիսկ վիրավորական արտահայտությունը հնչեցվել է նշված ամբիոնից, ապա դրա համար ներողությունը կարող է այլ կերպ սահմանվել: Եվ դատարանը սահմանել է, որ ներողության տեքստը պետք է հրապարակվի ՀՀ-ում առնվազն 1000 տպաքանակ ունեցող թերթում՝ հետեւյալ բովանդակությամբ. «Ես՝ Լենա Նազարյանս, 2021 թվականի հունիսի 3-ին ԱԺ արտահերթ նիստի ժամանակ պատգամավոր Թագուհի Թովմասյանի հասցեին հնչեցրած «իդիոտկա» վիրավորական արտահայտության համար ներողություն եմ խնդրում նրանից»:

Հարցին, թե ինչ ժամկետներ է սահմանել դատարանը՝ վճռի կատարման համար, փաստաբանը պատասխանեց, որ դատարանը ժամկետներ չի կարող սահմանել, որովհետեւ նախ վճիռն ունի բողոքարկման ժամկետ: «Ես ասացի՝ քանի որ մեր գումարային հատվածի պահանջը չէր բավարարվել, ես ինքս չբավարարված մասով վերաքննիչ բողոք եմ ներկայացրել: Եվ վերաքննիչ բողոք է ներկայացրել նաեւ պատասխանողի ներկայացուցիչը: Հետեւաբար, ակտը պետք է կատարվի այն ժամանակ, երբ մտնում է ուժի մեջ եւ դառնում է անբողոքարկելի»: Փաստաբանը նաեւ ասաց, որ Լենա Նազարյանն անձամբ չի ներկայացել դատական նիստերին. «Պատասխանողի ներկայացուցիչը՝ փաստաբանը, գնացել էր «իդիոտկա» բառի ծագումնաբանության հետեւից: Եվ այդ նշանակությունը վեր հանելու, պարզելու համար դիմել էր Բրյուսովի անվան լեզվագիտական համալսարանին, որտեղից պատասխան էր ստացել, որ «իդիոտ» բառը հին հունական ծագում ունեցող բառ է, որը նշանակում է մեկուսացված անձ: Մեկ այլ մեկնաբանություններով, եթե չեմ սխալվում, նշանակում է առաջնորդ: Ի պատիվ մեր դատարանների՝ այդ փաստը չընդունվեց»:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԲԱԶՄԱԴՐՎԱԳ ԴԵՊՔ

ԽՈՇՈՐ ՉԱՓԻ ԳՈՒՄԱՐԻ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆ

Ավարտվել է Գյումրի քաղաքի՝ 1997թ. ծնված բնակչի կողմից խարդախությամբ առանձնապես խոշոր չափի՝ ընդհանուր ավելի քան 315 մլն ՀՀ դրամից ավելի գումար հափշտակելու բազմադրվագ դեպքի նախաքննությունը:

2019 թ.-ի մայիսին Երեւանի բնակիչ Ս.Դ.-ն, ով հանդիսանում է ՍՊԸ ընկերության տնօրեն, հաղորդում է ներկայացրել այն մասին, որ մայնինգ կատարող սարքեր ձեռք բերելու եւ այդպիսով շահույթ ստանալու նպատակով 2018թ. հոկտեմբերից համագործակցություն է սկսել գործարար ներկայացած Ս.Խ.-ի հետ, ինչի արդյունքում՝ վերջինս իրենից հափշտակել է առանձնապես խոշոր չափի գումար:

Բազմակողմանի քննությամբ բացահայտվել է 26-ամյա երիտասարդի կողմից իրականացված սխեմատիկ բնույթ ունեցող խարդախությունների շղթա: Մասնավորապես, ձեռք բերված փաստական տվյալներով հիմնավորվել է, որ վերջինս շահույթ ստանալու պատրվակով ինչպես Ս.Դ.-ին, այնպես էլ մի քանի այլ անձանց առաջարկել է գնել նյութական արժեք ներկայացնող եւ, իբրեւ թե, համապատասխան կրիպտոբորսայում վաճառելու հնարավորությամբ օժտված մայնինգ կատարող սարքեր, եւ հիշյալ անձանցից մոտ մեկ տարի շարունակ խաբեությամբ ստացել ընդհանուր 315. 788. 602 ՀՀ դրամ գումար:

Երիտասարդը նախ ՍՊԸ-ի տնօրեն հանդիսացող գործարարին հավաստիացրել է, որ անձամբ է զբաղվում հիշյալ սարքերի ներմուծմամբ, վստահություն ձեռք բերելու նպատակով ցույց տվել իր բջջային հեռախոսում գրանցված բանկային հաշիվներին ստացված ինչ-որ գումարներ, ապա նրան առաջարկել 1.154.280 ՀՀ դրամին համարժեք 2400 ԱՄՆ դոլարով ձեռք բերել «Antminer Z9 mini» սարք՝ խոստանալով դրա գործարկումից վերջինիս ապահովել ամսական 280.000 ՀՀ դրամի չափով շահույթ:

Ստանալով Ս.Դ.-ի համաձայնությունը՝ հանցագործության կատարման պահին 22-ամյա երիտասարդը վերցրել է պահանջված գումարն ու շուրջ մեկ ամիս անց ՍՊԸ տնօրենին մետաղյա թիթեղով պատված ինչ-որ սարքավորում ներկայացրել որպես «Antminer Z9 mini» սարք՝ առաջարկելով խոստացված եկամտաբերությունն ապահովելու համար այն տեղադրել իբրեւ թե իր հորը պատկանող, սակայն իրականում գոյություն չունեցող գործարանում:

Հետագայում ավելի մեծ եկամուտ ստանալու պատրվակով գործարարին առաջարկվել է գնել տասնյակ այլ սարքեր, ինչի դիմաց երիտասարդը նրանից ինչպես առձեռն, այնպես էլ փոխանցման միջոցով մաս-մաս ստացել է ընդհանուր 811.000 ԱՄՆ դոլար գումար, որից 25.949.232 ՀՀ դրամի չափով ավելի ուշ մաս-մաս որպես եկամուտ փոխանցել է Ս.Դ.-ին՝ սկզբնական շրջանում նրա վստահությունը չկորցնելու նպատակով:

Այնուհետեւ, չկատարելով իր ստանձնած պարտավորությունը, երիտասարդը, շուրջ 40 հատ բարձր եկամտաբերությամբ եւ որակական հատկանիշներով սարքեր տրամադրելու փոխարեն, գործարարին տրամադրել է խոստացվածից խիստ ցածր որակական հատկանիշներով սարքավորում՝ այդպիսով նրանից հափշտակելով 13.468.763 ՀՀ դրամ գումար:

Բացի այդ, երիտասարդը, տեղեկանալով նաեւ Ս.Դ.-ի հետ փոխկապակցված անձանց՝ ֆինանսապես ապահովված լինելու մասին եւ օգտագործելով գործարարի մոտ ձեռք բերած վստահությունը, վերջինիս միջոցով նույն պայմաններով մայնինգ սարքեր ձեռք բերելու հարցի շուրջ համաձայնության է եկել նաեւ նրա հարազատների եւ ընկերների, վերջիններիս միջոցով էլ՝ տասնյակ այլ անձանց հետ, որոնցից նույնպես նույն եղանակով պարբերաբար խաբեությամբ ստացել եւ հափշտակել է առանձնապես խոշոր չափերի գումարներ՝ պատվիրված սարքերը տարբեր պատճառաբանություններով չփոխանցելով եւ շարունակ խուսափելով վերջիններիս զանգերից: Նրա հանցավոր գործողություններից տուժել է ընդհանուր 23 անձ:

Ձեռք բերված բավարար փաստական տվյալների հիման վրա՝ Գյումրու բնակչին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, որը համապատասխանում է գործող օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին (6 դրվագ):

Նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են հսկող դատախազին այն հաստատելու եւ դատարան ուղարկելու նպատակով:

Ծանուցում. հանցանքի համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝դատարանի՝օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2024 թվականի փետրվարի 1-ից դատական ներկայացվող նոր դատական գործերով բոլոր դատավարական փաստաթղթերը՝ հայցադիմում, պատասխան, միջնորդություն, պետական տուրքի վճարում եւ շատ այլ գործողություններ արդեն հնարավոր է իրականացնել մեկ միասնական էլեկտրոնային համակարգի՝ cabinet.armlex.am միջոցով, առանց տանից դուրս գալու:

Բացառություն են կազմելու պետական կամ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունները:

Այս մասին «Ֆեյսբուք»-ի իր էջում հայտնել է ՀՀ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը՝ նշելով, որ առաջին փուլում համակարգից պարտադիր օգտվողներն են լինելու իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, պետական եւ ՏԻՄ-երը, փաստաբանները, սնանկության գործով կառավարիչները, նոտարները, արտոնագրված հաշտարարները: Ֆիզիկական անձանց համար պարտադիր օգտվելու պահանջը կգործի այն դեպքում, եթե առնվազն մեկ անգամ համակարգի միջոցով կատարել է գործողություն եւ հետո դատարանին չի ներկայացրել դիմում՝ համակարգն օգտագործելու անհնարինության մասին:

«Այս բարեփոխման առավելություններն են.

1. Էլեկտրոնային համակարգում նոր փաստաթղթի տեղադրման դեպքում համակարգն օգտագործողն անմիջապես տեղեկացվելու է իր մուտքագրած հեռախոսահամարին կարճ հաղորդագրության միջոցով:

2. Դատական նիստերն այլեւս անհարկի չեն հետաձգվի. համակարգը դատավորին թույլ կտա էլեկտրոնային օրացույցով տեսնել կողմերի զբաղվածությունը:

3. Պետական տուրքը վճարվելու է միայն համակարգի միջոցով:

4. Ապացույցների ներկայացման ընթացակարգը եւս էլեկտրոնային է: Իրեղեն ապացույցի ներկայացման համար համակարգ կներբեռնվի դրա լուսանկարը կամ տեսագրությունը: Այն դատարան կներկայացվի՝ ըստ պահանջի: Համակարգը բացառում է դատարան ներկայացված փաստաթղթերը փոփոխելու կամ միջամտության որեւէ հնարավորություն:

5. Դատավարական փաստաթղթերը կհամարվեն ստորագրված, իսկ դատարանի պարագայում՝ նաեւ կնքված, եթե դրանք կազմվել կամ ներկայացվել են համակարգի միջոցով եւ վավերացվել էլեկտրոնային ստորագրությամբ: Ստուգվելու է էլեկտրոնային ստորագրության վավերականությունն ու իսկությունը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԻՐԱՎՈՒՆՔ

Ո՞Վ ԿԱԶԲԱՂԵՑՆԻ ԹՈՒՆՅԱՆԻ ՏԵՂԸ

Սահմանադրական դատարանի դատավոր դառնալու համար դիմել են 3 դատավոր, որոնցից երկու թեկնածուների մեջ է գնալու «կռիվը»: ՍԴ դատավոր դառնալու համար դիմել է Երեւան քաղաքի դատավոր Դավիթ Բալայանը եւ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի եղբայրը՝ Դավիթ Խաչատուրյանը, որը մի քանի ամիս առաջ էր ԲԴԽ-ից գնացել ու ԱԺ-ում ընտրվել էր Վճռաբեկ դատարանի դատավոր:

Ինչպես հայտնի է, Սահմանադրական դատարանի դատավոր Արայիկ Թունյանը հրաժարական տվեց, եւ ԱԺ-ն, հիմք ընդունելով հրաժարականի մասին դիմումը եւ առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 147-րդ հոդվածի 2-րդ մասով, 2024 թվականի հունվարի 4-ից դադարած համարեց Սահմանադրական դատարանի դատավոր Արայիկ Թունյանի լիազորությունները:

Նշենք, որ Թունյանն ընտրվել է Եվրասիական տնտեսական միության դատարանի դատավոր եւ այդ պատճառով հրաժարական տվեց ՍԴ դատավորի պաշտոնից:

Իսկ ո՞վ պետք է զբաղեցնի Թունյանի տեղը: Դատական համակարգից ArmLur.am-ին հասած լուրերի համաձայն՝ գնդակը դատավորների դաշտում է, եւ Դատավորների ընդհանուր ժողովը Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածու պետք է ներկայացնի, ու դատավորները պետք է ընտրեն նրան, ապա՝ գործուղեն ԱԺ: Դատավորների ժողովը կայանալու է փետրվարի 2-ին: Ստացվում է՝ դատավորների ժողովը պետք է 4 թեկնածուներից մեկին ընտրի ու ուղարկի ԱԺ, որտեղ եւ կկայացվի վերջնական որոշումը:

Երեկ ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ դատավորներն ավարտել են քվեարկությունը, նրանք կատարել են իրենց ընտրությունը եւ սպասում են արդյունքների հրապարակմանը:

ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔ

Հակակոռուպցիոն դատարանը բավարարել է քննիչի միջնորդությունը՝էկոնոմիկայի նախկին փոխնախարար Անի Իսպիրյանի նկատմամբ 2 ամիս ժամկետով տնային կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ը գրել էր, որ փոխնախարար Անի Իսպիրյանը կկալանավորվի:

Նշենք, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից ձեռնարկված լայնածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների, ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում իրականացվող քրեական վարույթի շրջանակներում կատարված քննչական եւ գաղտնի քննչական գործողությունների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնատար անձինք նախնական համաձայնությամբ, մի խումբ անձանց դրդմամբ եւ օժանդակությամբ չարաշահել են ծառայողական լիազորությունները:

● *Փետրվարի 1-ից 2-ը Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 63 դեպք, որոնցից 1-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՔԱՆԴԵԼ-ՉՔԱՆԴԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

2019թ. օգոստոսի 4-ին՝ Բերդ համայնքի Նավուր գյուղի 200-ամյակի տոնակատարության ժամանակ, Տավուշի մարզպետ Հայկ Չոբանյանը հայտարարեց, որ Նավուրի դպրոցի շենքի վիճակը Հայաստանի վերջին 30 տարվա իշխանությունների ամոթն է, եւ այդ իշխանությունների կողմից ինքը ներողություն է խնդրում դպրոցի վիճակի համար: Մարզպետ Չոբանյանը խոստացավ, որ դպրոցի շենքը կհիմնանորոգվի՝ հույս հայտնելով, որ գյուղի հաջորդ տարեդարձի տոնակատարության ժամանակ դպրոցի շենքը կլինի հիմնանորոգված: Նավուրի դպրոցի շենքը կառուցվել է 1971թ.-ին, այն 1988թ.-ի երկրաշարժից հետո թեթեւակի նորոգվել է, շենքում երկրաշարժի հետեւանքները վերացվել են, նաեւ տանիքն է փոխվել: Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի ծրագրով դպրոցի մարզադահլիճը նորոգվել է: Մարզպետ Չոբանյանի պաշտոնավարման շրջանում դպրոցի տանիքը եւ պատուհանները փոխվել են, սակայն դպրոցի վիճակը վատթար է, դասասենյակների ու միջանցքի պատերի գաջը թափված է, դասասենյակների միջնորմ պատերը խարխուլ են, մի դասասենյակից հնարավոր է տեսնել մյուսը: 2014-ին Նավուր համայնքի բյուջեից 10 միլիոն դրամ է ծախսվել դպրոցի հիմնանորոգման նախագիծ-նախահաշիվ կազմելու համար, սակայն անցած 10 տարում շինանյութերի գներն աճել են, այդ նախագիծ-նախահաշիվն այժմ անպետք է: Նավուր համայնքի երկարամյա ղեկավար, այժմ Բերդի համայնքապետարանի պաշտոնյա Արամ Նիգոյանը հայտնեց, որ Նավուրի դպրոցի 130 աշակերտները դպրոցի շենքի վատթար վիճակի պատճառով անցած ուսումնական տարվա ընթացում դասերն անցկացրել են Նավուրի գյուղապետարանի շենքում, այժմ դասերը տեղի են ունենում Նավուրի դպրոցի շենքի երկու մասնաշենքերում: Խոսակցություններ կան, որ այս տարվա գարնանը Նավուրի դպրոցի նոր շենքը կառուցվելու է ներկայիս դպրոցի տեղում, այդ պատճառով դպրոցի 3 մասնաշենքերը պետք է քանդվեն: Ա. Նիգոյանը այդ խնդրով եղել է Քաղաքաշինության կոմիտեում, հանդեպել Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի հետ: Նա դեմ է դպրոցի մասնաշենքերը քանդելուն՝ նշելով, որ դպրոցի տարածքում բավականաչափ ազատ տարածք կա նոր շենքի կառուցման համար: Նիգոյանն ասաց, որ դպրոցի նոր շենքը կառուցվելու է 3 տարում. եթե մասնաշենքերը քանդեն, 3 տարում որտե՞ղ են կայանալու դասերը: Դպրոցի 2 մասնաշենքերը, որոնցում հիմա դասեր են ընթանում, վթարային չեն, դրանցում նախկինում նորոգման որոշ աշխատանքներ են կատարվել: Նավուրի դպրոցի նոր շենքի տեղակայման, 3 մասնաշենքերը քանդել- չքանդելու վերաբերյալ հարցում ենք ուղարկել մարզպետ Հայկ Ղալումյանին, որի պատասխանում նշված է. «Նավուրի դպրոցի նոր շենքի հետ կապված տեղակայման աշխատանքները դեռեւս համաձայնեցված չեն մարզպետի աշխատակազմի հետ, ուստի դեռ անորոշ է հին մասնաշենքերի հետ կապված քանդման աշխատանքների ծավալը»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ԵՆ

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԼԻՄԱՅԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԵՐ

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից վերամշակվել են «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀ շինարարական նորմերը: ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոն»-ի տնօրեն Լեւոն Ազիզյանի խոսքով՝ շինարարական կլիմայաբանության նորմերն արդեն ավելի քան 10 տարվա վաղեմություն ունեն:

«Շինարարական կլիմայաբանության մեջ ներկայացված են կլիմայական հարաչափեր, այսինքն՝ պարամետրեր, որոնք կիրառվում են շենքերի եւ շինությունների, ջեռուցման, օդափոխության, օդի լավորակման, ջրամատակարարման համակարգերի նախագծման, ինչպես նաեւ քաղաքային եւ գյուղական բնակավայրերի հատակագծման եւ կառուցապատման խնդիրներում: Մեր ունեցած նորմերը վերանայելու անհրաժեշտություն է առաջացել՝ հաշվի առնելով կլիմայի տաքացման ահագնացող տեմպերը եւ՛ աշխարհում, եւ՛ Հայաստանում»,-ասաց Լեւոն Ազիզյանը:

Վերջին 90 տարվա ընթացքում, օդերեւութաբանական դիտարկումների համաձայն, ամենատաք չորս տարիները Հայաստանում դիտվել են 2010, 2018, 2021 թվականներին: Ջերմաստիճանի բարձրացումն առավել արագ է տեղի ունենում ամռան սեզոնին, ինչն արտահայտվում է ջերմային ալիքների եւ սաստիկ շոգերի հաճախականության զգալի աճով:

«Հայաստանում բացարձակ առավելագույն ջերմաստիճանը դիտվել է 2011 թվականին Մեղրիում՝ կազմելով 43.7 աստիճան: Բավական շոգ եղանակ եղել է նաեւ 2017 եւ 2018 թվականներին, երբ ամռանն օդի առավելագույն ջերմաստիճանը Արարատյան դաշտում գերազանցել է 42 աստիճանը»,-ասաց Լեւոն Ազիզյանը:

Մասնագետն ընդգծեց, որ էքստրեմալ բարձր ջերմաստիճանային պայմանների իմացությունը շատ կարեւոր է շինարարության կազմակերպման համար: Եվ, ահա, վերանայված կլիմայաբանության շինարարական նորմերում արտացոլվել են վերջին տասնամյակի եղանակակլիմայական դիտարկումների տվյալները:

«Օրինակ՝ ժամանակի ընթացքում փոխվել է քամու առավելագույն արագությունը, սեզոնին գրանցված առավելագույն կամ նվազագույն ջերմաստիճանը: Երբ այդ տվյալները, հարաչափերը ճշգրիտ արտացոլվեն համապատասխան նորմերում, կառուցապատողները, դրանց հետեւելով, հետագայում կկարողանան խուսափել բարդություններից: Մեկ այլ տարբերակ ներկայացնեմ. օրինակ՝ սովորաբար խողովակաշարերը անցկացվում են ավելի խորը: Հիմա հանրապետությունում նկատվում է, որ օդի ջերմաստիճանի բարձրացմամբ պայմանավորված ճմեռային շրջանը կրճատվել է: Այսինքն՝ խողովակները կարող են ավելի ցածր խորությամբ անցկացնել ու լրացուցիչ ծախսեր չկատարել»,-ասաց Լեւոն Ազիզյանը:

Նորմերի վերանայումը հնարավորություն կտա կառուցապատումից առաջ հաշվարկները կատարել ավելի ճիշտ հետագա խնդիրներից խուսափելու համար: Տանիքների ձյան բեռնվածություն, քամու առավելագույն արագություն, ինչպես նաեւ նվազագույն եւ առավելագույն ջերմաստիճաններ՝ բոլոր առումներով, եթե նշված նորմատիվները կիրառվեն շինարարության մեջ, ապա դա միայն դրական ազդեցություն կունենա որակյալ շինարարական աշխատանքներ կատարելու համար:

Շինանրարական նոր նորմերը հաստատված են ու հրապարակված են իրավական ակտերի միասնական կայքում:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԵՂԱՆԱԿ

ՍՊԱՍՎՈՒՄ Է ՏԱՔ ՓԵՏՐՎԱՐ

Հանրապետությունում մինչեւ փետրվարի 4-ը հիմնականում կպահպանվի առանց տեղումների եղանակ: Փետրվարի 5-ին առանձին լեռնային շրջաններում, ինչպես նաեւ փետրվարի 6-ի առավոտյան ժամերին շրջանների մեծ մասում կդիտվեն տեղումներ, որոնք նախալեռնային, հովտային գոտիներում կլինեն ձնախառն անձրեւի ու անձրեւի տեսքով, իսկ լեռնային շրջաններում՝ ձյան տեսքով: ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոն»-ի տնօրենի տեղակալ Գագիկ Սուրենյանը տեղեկացրեց, որ փետրվարի 6-ի կեսօրից հետո հանրապետության ամբողջ տարածքում կդիտվի առանց տեղումների եղանակ:

«Փետրվարի 4-ից սկսած մեր երկիր հարավից սկսում են ներթափանցել բավական տաք օդային հոսանքներ: Փետրվարի 4-6-ն ընկած ժամանակահատվածում գիշերային ու ցերեկային ժամերին սպասվում է օդի ջերմաստիճանի բարձրացում մինչեւ 12 աստիճանով: Փետրվարի 7-ի ցերեկը Արարատյան դաշտում սպասվում է +12-+13, Երեւանում՝ +10-+12 աստիճան, Սյունիքում հովիտներում օդի ջերմաստիճանը կհասնի +16-+18 աստիճանի, առանձին հատվածներում չի բացառվում +20 աստիճան»,-ասաց Գագիկ Սուրենյանը:

Հանրապետությունում փետրվարի 5-6-ն ընկած ժամանակահատվածում սպասվում է քամու ուժգնացում: Փետրվարի 5-ի առանձին շրջաններում քամու արագությունը կլինի 20-25 մ/վ, փետրվարի 6-ին քամու արագությունը կհասնի գագաթնակետին՝ 35 մ/վ արագությամբ, մասնավորապես՝ Շիրակում, Լոռիում, Տավուշում, Գեղարքունիքում, Սյունիքում: Փետրվարի 7-ից սկսած քամին կդադարի:

Ինչ վերաբերում է ընդհանուր փետրվար ամսվա եղանակակլիմայական կանխատեսումներին, ապա Գագիկ Սուրենյանը տեղեկացրեց, որ օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է նորմայից բարձր 3-4 աստիճանով: Տեղումների քանակը կլինի նորմայի մոտ: Նրա գնահատմամբ՝ սպասվում է բավական տաք փետրվար: Տաք օդային հոսանքների ներթափանցման ժամանակ առանձին օրերին ցերեկային ժամերին Շիրակում, Կոտայքում, Վայոց ձորում, Գեղարքունիքում օդի ջերմաստիճանը կհասնի +6 - +10-ի, իսկ Լոռու, Տավուշի հատվածում կհասնի +17- +20-ի, Արարատյան դաշտում՝ +15-+17-ի, Սյունիքի հովտային շրջաններում՝ +20-+23-ի, Սյունիքի նախալեռնային շրջաններում +14-ի, Երեւանում՝ +14 - +16 աստիճանի:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 5 պատահար. 1 մարդ զոհվել է, 4-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՄԱՅՆՔ

ՄԵԿՆ Է ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ

Գեղարքունիքի մարզի խորհրդի 2024 թվականի անդրանիկ նիստում քննարկվող օրակարգային հարցերից մեկը վերաբերել է մանկապարտեզների գործունեությանը եւ համայնքային ենթակայության արտադպրոցական հաստատություններում աշխատող մանկավարժների կամավոր ատեստավորման գործընթացին:

Հանդես գալով հարցի զեկուցմամբ՝ մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչության պետ Կարեն Ջազյանը նշեց՝ Գեղարքունիքի մարզի 5 համայնքների բնակավայրերում 2023 թվականին գործել է 53 մանկապարտեզ, որտեղ հաճախել է 4043 սան: Մոբայլ մանկապարտեզ է գործում Դրախտիկ, Աղբերք եւ Ծափաթաղ բնակավայրերում, իսկ 2023 թվականից այլընտրանքային՝ նախադպրոցական կրթություն է իրականացվում Ծաղկունք, Գեղամավան, Նորաշեն եւ Շողակաթ բնակավայրերում:

Տարվա ընթացքում շահագործման է հանձնվել Վաղաշենի մանկապարտեզը, որն ունի 77 սան:

2024 թվականին շինարարական աշխատանքները կշարունակվեն Աստղաձորի, Վարդենիսի, Հայրավանք-Բերդկունքի եւ մի շարք այլ բնակավայրերի մանկապարտեզներում, իսկ մի շարք այլ մանկապարտեզներ էլ կբացեն իրենց դռները կառուցման կամ հիմանորոգման աշխատանքների ավարտից հետո:

«2023 թվականին մարզում գործել են համայնքային ենթակայության 9 երաժշտական, 6 արվեստի, 3 գեղարվեստի դպրոցներ, 2 ստեղծագործական եւ 1 ուսուցողական կենտրոններ, 6 մարզադպրոցներ: Նշված հաստատություններից կամավոր ատեստավորման են մասնակցել 15-ից ավելի մանկավարժական աշխատողներ եւ մարզիչ-մանկավարժներ, սակայն նրանցից միայն մեկն է կարողացել հաղթահարել ատեստավորման պահանջները: Վերջինս արդեն ստանում է օրենքով սահմանված լրավճարը: Պետք է նշել, որ ծրագրեր իրականացնող հաստատությունների կամավոր ատեստավորված մանկավարժական աշխատողներին եւ մարզիչ-մանկավարժներին լրավճար տրամադրվում է պետական, այլ ոչ թե համայնքային բյուջեի միջոցներից, ինչը եւս շահագրգռող է համայնքապետարանների եւ նրանց ենթակայությամբ գործող արտադպրոցական կառույցների համար: Հուսանք, որ այս տարի կունենանք շատ ավելի տեսանելի արդյունքներ, կամավոր ատեստավորման ցանկություն հայտնած ու լրավճարի հնարավորությունից օգտվող ավելի շատ թվով մանկավարժներ»,-նշեց է Կարեն Ջազյանը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ Է ԾԱՎԱԼԵԼՈՒ

Արցախի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության հարցերով հանձնախումբը հանդես է եկել հայտարարությամբ:

«Ի լրումն 2024-ի հունվարի 18-ի հայտարարության՝ Արցախի հիմնական քաղաքական ուժերի հետ համագործակցությամբ ձեւավորված Արցախի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության հարցերով հանձնախումբը հայտնում է, որ հանձնախմբի նախնական կազմում հետեւյալ անհատներն են՝

Վարդան Օսկանյան, ՀՀ արտաքին գործերի նախարար (1998-2008)

Գեղամ Ստեփանյան, Արցախի մարդու իրավունքների պաշտպան

Կարեն Բեքարյան, «Հայացք» վերլուծական կենտրոնի խորհրդի նախագահ, Հայաստան

Մարիո Նալպատյան, Հայ դատի կենտրոնական խորհրդի անդամ, Արգենտինա

Գասպար Կարամպետյան, Եվրոպայի Հայ դատի հանձնախմբի նախագահ, Բելգիա

Գառնիկ Քըրքոնեան, միջազգային իրավաբան, ԱՄՆ

- Հանձնախմբի կազմը կընդլայնվի՝ ներառելով անհատների Ռուսաստանից եւ Մերձավոր Արեւելքից:

- Հանձնախմբի գլխավոր խնդիրը լինելու է Արցախի ժողովրդի՝ միջազգային երաշխիքներով հավաքական հայրենադարձության եւ իր հայրենիքում ապահով, անվտանգ ու արժանապատիվ ապրելու իրավունքի հետապնդումը եւ պաշտպանությունը:

- Արցախի ժողովուրդը ցեղասպանության սպառնալիքի տակ բռնի տեղահանված է իր տնից, հողից ու հայրենիքից, եւ նրա բնական եւ անքակտելի իրավունքն է անխոչընդոտ վերադառնալ իր բնօրրանը, շարունակել բնականոն ժողովրդավարական կյանքը՝ իր լեզվի, մշակույթի, հոգեւոր ժառանգության պահպանման, սեփականության վերատիրացման, զարգացման եւ կյանքի կազմակերպման՝ միջազգայնորեն ընդունելի նորմերով եւ սկզբունքներով:

- Հակամարտության հետեւանքով բռնի տեղահանվածների՝ իրենց հայրենիք կամավոր վերադառնալու իրավունքը ճանաչված է որպես միջազգային իրավունքի նորմ, որը հիմնավորվում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով (Universal Declaration of Human Rights), Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային կոնվենցիայով (International Convention on Civil and Political Rights) եւ տարածաշրջանային բազմաթիվ հռչակագրերով:

- Ավելին՝2023-ի նոյեմբերի 17-ին Արդարադատության միջազգային դատարանը (ICJ) վճռել է, որ Ադրբեջանի Հանրապետությունը պետք է ապահովի 2023-ի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղը լքածների անվտանգ եւ անարգել վերադարձը:

- Հանձնախումբը բազմակողմանի գործունեություն է ծավալելու միջազգային հարթակներում՝ բարձրաձայնելու, ծանոթացնելու, հիմնավորելու եւ հետապնդելու Արցախի ժողովրդի խնդիրները, շահերը եւ իրավունքները:

- Հանձնախումբը, վերը նշված նպատակների կյանքի կոչման համար, մշտական ու հետեւողական աշխատանք է իրականացնելու արցախահայության, Հայաստանի հանրության ու Սփյուռքի հայրենակիցների հետ՝նպատակ ունենալով կոնսոլիդացնել բոլոր ռեսուրսները, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների, ակադեմիական եւ փորձագիտական շրջանակների:

- Հանձնախումբը Արցախի ժողովրդին ներկայացնելու է պետական եւ քաղաքական մարմինների առաջ, ինչպես նաեւ միջազգային ատյաններում, համաժողովներում եւ միջազգային դատարաններում:

- Ակնկալում ենք, որ ՀՀ իշխանությունները եւ քաղաքական բոլոր ուժերը աջակցության եւ համագործակցության պատրաստակամություն կցուցաբերեն Հանձնախմբի գործունեությանը: Հանձնախումբը պատրաստ է աշխատել անխտիր յուրաքանչյուրի եւ բոլորի հետ, ովքեր պատրաստ են պատասխանատվություն ստանձնել՝ համապատասխան լիազորություն ստացած այս հանձնախմբի հետապնդած նպատակների շրջանակներում»:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ԻՐԱՎՈՒՆՔ՝ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հայաստանում 2023 թվականի դրությամբ 43 քաղաքացի դիմել է կենսաթոշակային հաշվում առկա միջոցներն ամբողջությամբ ստանալու պահանջով: Օրենքում կատարվող փոփոխություններով՝ քաղաքացիներն առաջիկայում նման պահանջով պետք է դիմեն ոչ թե Առողջապահության նախարարություն, այլ Միասնական սոցիալական ծառայություն:

««Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծն ԱԺ աշխատանքի եւ սոցիալական հարցերի հանձնաժողովում ներկայացրեց առողջապահության փոխնախարար Արտակ Ջումայանը: Ներկայումս կառավարության սահմանած ցանկում ներառված հիվանդություններով հիվանդանալու դեպքում, Առողջապահության նախարարության կողմից տրված եզրակացության հիման վրա, մասնակիցն իրավունք ունի ներկայացնելու իր կենսաթոշակային հաշվում առկա միջոցների՝ ամբողջությամբ ստանալու պահանջը:

Գործող օրենսդրության համաձայն՝ յուրաքանչյուր դեպքի համար առողջապահության նախարարի հրամանով ստեղծվում է մասնագիտական հանձնաժողով, որն իրականացնում է ցանկում ներառված հիվանդությունների եւ քաղաքացու ախտորոշման համապատասխանության որոշման գործառույթ եւ տրամադրում է եզրակացություն: Ըստ փոխնախարարի՝ սա առաջացնում է լրացուցիչ փաստաթղթաշրջանառության եւ Առողջապահության նախարարության՝ որպես քաղաքականություն մշակող մարմնի համար ոչ բնորոշ գործառույթ:

«Որոշումն ուժի մեջ է մտել 2015 թվականից: Մինչեւ օրս դիտվում է քաղաքացիների դիմելիության զգալի աճ: Մասնավորապես, եթե 2017-2018թթ. դիմել է 2 քաղաքացի, ապա 2023 թվականին՝ 43: Նախագծով նախատեսվում է տվյալ գործառույթը վերապահել Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայությանը»,-ասաց փոխնախարարը: Աշխատանքի եւ սոցիալական հարցերի փոխնախարար Դավիթ Խաչատրյանը նշեց, որ քաղաքացիների հարմարավետության տեսանկյունից ճիշտ է, որ այս գործառույթը նույնպես իրականացնի Միասնական սոցիալական ծառայությունը, որ քաղաքացին կենսաթոշակային գրեթե բոլոր հարցերով դիմի այս ծառայությանը: Քաղաքացին իր կենսաթոշակային հաշվում առկա միջոցներն ամբողջությամբ ստանալու պահանջ ներկայացնելու իրավունք ունի, եթե առկա են որոշակի հիվանդություններ: Այդպիսի հիվանդությունների ցանկը սահմանել է կառավարությունը, դրանում ներառված են, օրինակ՝ չարորակ նորագոյացությունները, նյարդային համակարգի որոշ հիվանդությունները, շաքարային դիաբետը՝ դեկոմպենսացված փուլում, եւ այլն:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

«ՉԵԽԻԱՅԻ ԱՄՐՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՂՅԱԿՆԵՐԸ»

Հայաստանի պատմության թանգարանում հունվարի 31-ին բացվեց «Չեխիայի ամրոցները եւ դղյակները» խորագրով ժամանակավոր ցուցահանդեսը: Ցուցահանդեսի պաշտոնական բացման արարողությանը ներկա էին Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը, Չեխիայի Հանրապետության Պատգամավորների պալատի նախագահ Մարկետա Պեկարովա Ադամովայի գլխավորած պատվիրակությունը, պատգամավորներ, դեսպաններ, մշակութային գործիչներ եւ այլք: Ցուցահանդեսը ներկայացնում է Չեխիայի պատմական երկու շրջանների՝ Բոհեմիայի եւ Մորավիայի ամենահետաքրքիր ամրոցներն ու դղյակները:

Հայաստանի պատմության թանգարանի տնօրեն Դավիթ Պողոսյանի խոսքով՝ ազդարարվեց Հայաստանի պատմության թանգարանի եւ Չեխիայի ազգային թանգարանի միջեւ կարեւոր համագործակցության սկիզբը, որը նշանավորվեց ցուցահանդեսի բացումով:

«Սա Չեխիայի ազգային թանգարանի բավականին լավ ճանապարհորդած, բայց առաջին անգամ Հայաստանում ներկայացվող չեխական ամրոցներին եւ դղյակներին նվիրված ցուցահանդեսն է, որով միաժամանակ սկիզբ է դրվելու երկու ազգային թանգարանների միջեւ համագործակցությանը: Եվ այս առումով շնորհակալ ենք նմանատիպ բարձրաստիճան ներկայությամբ ազդարարելու համար ցուցահանդեսի բացումը, եւ երկու երկրների ազգային ժողովների նախագահների ներկայությունը շատ ու շատ կարեւոր է մեկնարկի համար»,- ասաց Պողոսյանը՝ շնորհակալություն հայտնելով Հայաստանում Չեխիայի դեսպանությանը եւ Չեխիայում Հայաստանի դեսպանությանը ցուցահանդեսը կազմակերպելու համար:

Հայաստանում Չեխիայի դեսպան Պետր Պիրունչիկը նշեց, որ Չեխիան ոչ միայն գարեջրերով է հայտնի, այլ նաեւ ունի ամենաշատ ամրոցները Եվրոպայում:

«Ուրախ եմ, որ դուք հնարավորություն կունենաք տեսնել այդ ամրոցներից եւ դղյակներից մի քանիսը: Շնորհակալություն եմ հայտնում Հայաստանի պատմության թանգարանին եւ Չեխիայի ազգային թանգարանին ցուցահանդեսը կազմակերպելու համար»,- ավելացրեց Պիրունչիկը:

Չեխիայի ազգային թանգարանի ներկայացուցիչ Պետր Բրուհան ասաց, որ ցուցահանդեսում ներկայացված է 25 ամրոց եւ դղյակ: Նրա խոսքով՝ ցուցադրության մեջ ընդգրկված վայրերի ընտրության չափանիշը եղել է դրանց պատմական նշանակությունը, ինչպես նաեւ ճարտարապետական, գեղարվեստական եւ պատմական արժեքը:

«Ուրախ ենք, որ հնարավորություն ունենք ցուցադրելու մեր ամրոցների եւ դղյակների մի փոքր մասը Հայաստանի պատմության թանգարանի հետ արդյունավետ աշխատանքի արդյունքում: Հուսով եմ, որ այս ցուցահանդեսը վերջինը չէ, եւ հետագայում եւս կլինեն տարբեր համատեղ ծրագրեր: Հուսով եմ, որ Պրահայում եւս կկազմակերպվի հայկական ցուցահանդես»- նշեց Չեխիայի ազգային թանգարանի ներկայացուցիչը՝ հավելելով, որ ցուցահանդեսը ոչ միայն գեղագիտական փորձ եւ տեղեկատվություն կփոխանցի, այլեւ ամրոցների եւ դղյակների ավելի մանրամասն ուսումնասիրության պատճառ կդառնա, ինչպես նաեւ Չեխիա այցելելու հրավեր կլինի:

Ցուցահանդեսում ներկայացված են ոչ միայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցուցակում արդեն ընդգրկված վայրերը (Պրահա, Չեսկի Կրումլով, Կուտնա Հորա, Լիտոմիշլ, Կռոմյեռժիժ, Լեդնիցե-Վալթիցե մշակութային լանդշաֆտ, Տելչ), այլ նաեւ մի շարք այլ կառույցներ, որոնք հավակնում են այդ ցանկում ընդգրկվելու (օրինակ՝ Կարլշտեյն, Կրժիվոկլատ, Յինդռյիխուվ Հռադեց): Այս ընտրանին ներառում է նաեւ տպավորիչ (օրինակ՝ Ռաբի) եւ ռոմանտիկ ավերակներ (օրինակ՝ Բեզդյեզ, Տրոսկի), ամրոցներ, որոնք վերածվել են դղյակ-նստավայրերի (օրինակ՝ Հլուբոկա նադ Վլտավոու, Վրանով նադ Դիյի) եւ ժամանակակից պալատներ՝ շրջապատված հոյակապ այգիներով (օրինակ՝Վելտրուսի, Յեմնիշտյե, Բուխլովիցե, Լեդնիցե եւ այլն):

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՆՑԱՎՈՐ ՑԱՆՑ

ԳՐՔԻ ԳՈՂԸ ԳՈՂ ՉԷ՞

Եվրոպայի առաջատար գրադարաններից գողացված ռուս գրող Ալեքսանդր Պուշկինի եւ այլ ռուս դասականների ստեղծագործությունների առաջին հրատարակությունների արժեքը գերազանցել է 2 միլիոն եվրոն: Այս մասին հաղորդում է The Times պարբերականը:

Եվրոպայում գրադարանավարները հայտնաբերել են, որ Պուշկինի եւ 19-րդ դարի այլ հայտնի ռուս գրողների ստեղծագործությունների հազվագյուտ եւ արժեքավոր առաջին հրատարակությունները փոխարինվել են կեղծ օրինակներով:

Այս պահի դրությամբ կորստի մասին վերջինը հայտնել է Բեռլինի պետական գրադարանը: Գրադարանային ֆոնդից անհետացել են Պուշկինի երեք ստեղծագործություններ՝ «Ավազակ եղբայրներ» պոեմը, «Բորիս Գոդունով» պատմական դրաման եւ «Կովկասի գերին» պոեմը, ինչպես նաեւ Ալեքսանդրա Էքստերի եւ բանաստեղծ Ալեքսեյ Կրուչոնիխի ֆուտուրիստական գրքերի առաջին հրատարակությունները, որոնք գնահատվում են մի քանի հարյուր հազար եվրո:

«Կեղծիքները պատրաստված են բարձր մակարդակով, - մեջբերում է պարբերականը Բեռլինի պետական գրադարանի խոսնակ Բարբարա Հայնդլի խոսքերը: - Անհրաժեշտ է խոշորացույց օգտագործել անճշտությունները հայտնաբերելու համար, ինչպիսիք են տպագրության փոքր կետերը, սխալ դրոշմը կամ թղթի տարբերությունը»:

2023թ. նոյեմբերին Ֆրանսիայում ձերբակալվել էին 3 վրացիներ, որոնց կասկածում են Պուշկինի հազվագյուտ ստեղծագործությունները գրադարաններից գողանալու մեջ: 24, 26 եւ 44 տարեկան (2 կին, 1 տղամարդ) կասկածյալներն, ըստ քննիչների, Եվրոպայում գրողի ստեղծագործությունների գողացման մեջ մասնագիտացած միջազգային հանցավոր ցանցի անդամներ են:

Ցանցի անդամները, սովորաբար, հեղինակավոր գրադարաններում կամ համալսարաններում խնդրել են տեսնել արժեքավոր գիրքը՝ պատճառաբանելով, թե հետազոտական նախագիծ են իրականացնում:

Ավելի վաղ տեղեկություններ էին տարածվել, որ Վիլնյուսի համալսարանի հազվագյուտ գրքերի ընթերցասրահից գողացել են Գոգոլի, Լերմոնտովի, Պուշկինի ստեղծագործությունների 17 հրատարակություններ՝ 440 հազար եվրո արժողությամբ: Էստոնիայի Տարտուի համալսարանի գրադարանը կորցրել է ութ հազվագյուտ հրատարակություն՝ մոտ 158 հազար եվրո արժողությամբ, իսկ երկու արժեքավոր հրատարակություն գողացել են Լատվիայի ազգային գրադարանից:

Վարշավայի համալսարանի գրադարանից գողացված հազվագյուտ ռուսական գրքերի արժեքը՝ ներառյալ Պուշկինի եւ Գոգոլի մի քանի ստեղծագործությունների առաջին հրատարակությունները, կազմում է մոտ կես միլիոն եվրո: Ընդհանուր առմամբ, գողացվել է 87 հազվագյուտ հրատարակություն: Դրանց մեծ մասը տպագրվել է Ռուսական կայսրության տարածքում 19-րդ դարի առաջին կեսին:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՐԾԱԹԵ ՄԵԴԱԼԱԿԻՐ

Հունահռոմեական ոճի ըմբշամարտի օլիմպիական փոխչեմպիոն, աշխարհի ու Եվրոպայի չեմպիոն Արսեն Ջուլֆալակյանը կմասնակցի «Փարիզ-2024» օլիմպիական խաղերի Պանամերիկյան որակավորման մրցաշարին, որը կկայանա փետրվարի 28-ից մարտի 1-ը մեքսիկական Ակապուլկոյում. հաղորդում է UWW-ի մամուլի ծառայությունը:

36-ամյա ըմբիշը կներկայացնի Արգենտինան եւ հանդես կգա 77 կգ քաշային կարգում: 130 կգ քաշային կարգի մրցմանը կմասնակցի Բրազիլիան ներկայացնող Էդուարդ Սողոմոնյանը:

Վարկանիշային մրցաշարից առաջ Ջուլֆալակյանը եւ Սողոմոնյանը փետրվարի 21-24-ին Ակապուլկոյում կմասնակցեն Պանամերիկյան առաջնությանը:

2021 թվականին կարիերան ավարտելու մասին հայտարարած Արսեն Ջուլֆալակյանը վերջերս Արգենտինայի դրոշի ներքո Ֆրանսիայում մասնակցել էր Անրի Դեգլանի անվան Գրան պրիին եւ դարձել արծաթե մեդալակիր: Նա Հայաստանը ներկայացրել է «Պեկին-2008», «Լոնդոն-2012» ու «Ռիո-2016» օլիմպիական խաղերում: Մեծ Բրիտանիայի մայրաքաղաքում Ջուլֆալակյանը դարձել էր արծաթե մեդալակիր:

ՏԵՂԱՓՈԽՎԵՑ

35-ամյա գերմանացի պաշտպան Ժերոմ Բոատենգը տեղափոխվեց իտալական «Սալերնիտանա»: Նրա պայմանագիրը նախատեսված է մինչեւ այս մրցաշրջանի ավարտը. հաղորդում է ակումբի կայքը:

Բոատենգի նախորդ ակումբը ֆրանսիական «Լիոնն» էր, որից նա հեռացել էր 2023թ. հունիսին: Անցած ամիս նա մարզվում էր Մյունխենի «Բավարիայում», սակայն համագործակցության առաջարկ Բոատենգը չստացավ: Նա ազատ գործակալի կարգավիճակում է միացել «Սալերնտինային» եւ հանդես կգա 5 համարի խաղաշապիկով: Ժերոմ Բոատենգը Գերմանիայի հավաքականի կազմում դարձել է 2014թ. աշխարհի չեմպիոն:

Ակումբային կարիերայում նա հանդես է եկել նաեւ «Հերտայում», «Համբուրգում», «Մանչեսթեր Սիթիում», «Բավարիայում»:

ՍՈՒՊԵՐԼԻԳԱ

Իսպանիայի չեմպիոն «Բարսելոնայի» նախագահ Ժոան Լապորտան նշել է ակումբներ, որոնք համաձայն են ՈՒԵՖԱ-ից անկախ եվրոպական Սուպերլիգայի ստեղծմանը:

«Եթե 2024-2025 թվականների մրցաշրջանում չմեկնարկի Սուպերլիգան, ապա կլինի մեկ տարի հետո: Ինձ համար միեւնույնն է, եթե անգլիական ակումբները չմասնակցեն: Սուպերլիգան ամեն ակումբին մասնակցության համար առաջարկում է 100 միլիոն եվրո: Անգլիական ակումբները չեն կարողանա այդքան պարգեւավճար ստանալ, եթե նույնիսկ հաղթեն Չեմպիոնների լիգայում:

Արդեն 12 ակումբ կա Սուպերլիգայում՝ «Բարսելոնա», «Ռեալ», «Ինտեր», «Միլան», «Նապոլի», «Ռոմա», «Մարսել», «Բրյուգե», «Անդերլեխտ», երեք հոլանդական ակումբներ»,- Լապորտայի խոսքը մեջբերում է Mundo Deportivo-ն:

2023թ. դեկտեմբերին Եվրոպական Միության դատարանը վճռել էր, որ ՖԻՖԱ-ն ու ՈՒԵՖԱ-ն չեն կարող ունենալ մենաշնորհ ակումբային ֆուտբոլում, եւ այլ կազմակերպություններ եւս կարող են կազմակերպել եւ անցկացնել մրցաշարեր:

● *Փետրվարի 8-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի կունենա «Մալեր. «Տիտան»» համերգը: Տոմսերի արժեքը՝3000-7000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:30-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՐՑ. Մշակութային արժեքների փորձագիտական գնահատման ի՞նչ կարգ է գործում Հայաստանի Հանրապետությունում:

Հայկ Ստեփանյան (33 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մշակութային արժեքների եւ մշակութային նշանակության առարկաների արվեստաբանական ու մշակութաբանական փորձաքննությունն իրականացնում է «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը: Փորձաքննության շահառուներ են հանդիսանում ՀՀ եւ օտարերկրյա քաղաքացիները եւ իրավաբանական անձինք, այդ թվում՝ ՀՀ պետական մարմինները: Փորձաքննությունն իրականացվում է ներկայացված դիմումի կամ հանձնարարության հիման վրա: Ֆիզիկական անձանց դեպքում գործընթացի սկիզբ է համարվում վերջիններիս կողմից կենտրոնի հայտագրման բաժին դիմում ներկայացնելը, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ գրության հրամանի, հանձնարարության, որոշման եւ փորձաքննության ենթակա իրի կամ իրերի եւ դրանց լուսանկարների տրամադրումը: Փորձաքննության առավելագույն ժամկետ է համարվում 15 օրը՝ բացառությամբ կողմերի համաձայնությամբ որոշակի ժամկետով երկարաձգելու դեպքերի: Կենտրոնը փորձաքննությունն իրականացնում է 28 ոլորտներում:

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Փորձաքննության արդյունքում հայտատուին տրամադրվում է համապատասխան փորձագիտական եզրակացություն: Փորձաքննության դիմաց հայտատուն կատարում է վճարներ՝ «Մշակութային արժեքների արվեստաբանական եւ մշակութաբանական փորձաքննության, ինչպես նաեւ իրականացվող այլ ծառայությունների վճարների գանձման մասին» կարգին համապատասխան:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Որքա՞ն է հարակից իրավունքների գործողության ժամկետը:

Ժորա Նալբանդյան (26 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հարակից իրավունքների պահպանության ժամկետը, համաձայն Հռոմի կոնվենցիայի, առնվազն 20 տարի է, սակայն ազգային օրենքներով կարող են սահմանվել պահպանության ավելի երկար ժամկետներ:

Մտավոր սեփականության գրասենյակ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հարակից իրավունքների պահպանության ժամկետները սահմանված են «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Իտալիայի ֆուտբոլի առաջնության՝ Սերիա Ա-ի հունվար ամսվա լավագույն մարզիչը «Ինտեր»-ի գլխավոր մասնագետ Սիմոնե Ինձագին է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-18 - 23 - 2 - 5
Կոտայքի լեռներ	- 14 - 17 - 2 - 6
Կոտայքի նախալեռներ	- 6 - 9 - 1 + 2
Գեղարքունիք	- 13 - 17 - 2 - 4
Լոռի	- 13 - 18 + 1 + 4
Տավուշ	- 3 - 7 + 3 + 7
Արագածոտնի լեռներ	- 15 - 18 - 2 - 6
Արագածոտնի նախալեռներ	- 6 - 9 0 + 3

Արարատ	- 5 - 7 + 3 + 5
Արմավիր	- 6 - 9 + 3 + 5
Վայոց ձորի լեռներ	- 13 - 17 - 3 - 5
Վայոց ձորի նախալեռներ	- 5 - 9 + 3 + 5
Սյունիքի հովիտներ	- 3 - 7 + 5 + 8
Սյունիքի նախալեռներ	- 9 - 14 0 + 4
ԼՂՀ	- 9 - 12 0 + 4
Երեւան	- 2 - 4 1 + 3

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **2.2.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*